ՆՈՐ-ԴԱՐ

№ 76 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 14 Մայիսի 1885 Երեքշաբթի 14 Մայիսի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 76

տարեկան 10 բուբլի. վեց ամիսը՝ 6 բուբլի. երեք ամիսը՝ 3 բ.50 կ. Հասով 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում մեծային խմբագրատանը։

Խմբագրության հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի մեծ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարությունների բառին 2 կ., բեկլամների համար՝ կրկնապատիկ։

Բաժանորդագրությունը շարունակվում է։ Նոր-Դար-ի բաժանորդագինը մայիսի 1-ից մինչև տարուայ վերջը—7 բ. 25 կ. է։

Նոր բաժանորդների փոխոխության համար վճարում են երեք հատ երեք կոպէկանոց մարկա։

Թերթը ամսարանոցում տարցող բաժանորդները վճարում են 80 կոպ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։
Քաղաքական.— Ապստամբությիւն Հիւսիս-արեւմտեան Կանադայում։ Իտալիա։ Բրիտանական Հնդկաստան։ Կանադա։ Եգիպտոս։ Լուրեր։
Թատրոն և երաժշտություն։
Հեռագրեր։
Յայտարարություններ։
Բանասիրական.—Մի բաժակ ցուրտ ջուր։

ՔՐՈՆԻԿՈՆ

Այս օրերս Կովկասի կառավարչապետը իւր պալատի առաջ աչքի անցրեց նոր ընդունուած միլիցիայի պինուորներին, որոնք, ինչպէս պատմում են, բաւական յառաջադիմութիւն են ցոյց տուել պինուորական վարժութիւնների մէջ, համեմատելով կարճ ժամանակամիջոցի հետ։ Կառավարչապետը իւր գոհունակութիւնը յայտնեց և համբուրեց նրանց հրամանատար պ. Երիսթավինն և իւր կողմից առաջարկեց իւրաքանչիւրը գինուորին հինգ Թունգի գինի տալ։

«Դրօշքա» լրագիրը հաղորդում է, որ Գորու գաւառի ձվրնվի գիւղում մի նոր տեսակ հիւանդութիւն է յայտնուել, որը մեծ կոտորածներ է անում։ Հիւանդութեան նշանները սրբանք են. հիւանդը առաջ սաստիկ տաքութիւն է զգում, յետոյ լեզուն սևանում և տրաք-տրաքվում է, այնուհետև բուկը ուռչում է և հիւանդը մեռնում։

«Каспій» լրագիրը հաղորդում է, որ այս օրերս Բագու քաղաքում ոստիկանութիւնը կալանաւորեց Ղուբայի բնակիչ պ. Վինոգրադովին, որը կասկածվում էր կեղծ Թղթադրամ շինելու մէջ։ Նրա մօտ գտնուեցան մեծ քանակութեամբ կեղծ Թղթադրամներ, որով նա կատարեալ յանգստով Ամերիկա էր գնում։

Ներքին գործոց մինիստրը, գրաֆ Դ. Ա. Տոլստոյ գտնվում է ներկայումս Մոսկուայում, և բժշկվում է Մոսկուայի հռչակաւոր բժիշկ Զախարինի մօտ։ Գրաֆ Տոլստոյն, բժշկի խորհուրդների չնորհիւ, իրեն լաւ է զգում. կարողանում է քնել և ախորժակով ուտել։ Հիւանդ մինիստրը, ինչպէս լսվում է, Մոսկուայում մնալու է մինչև մայիսի 15-ը։ (Русск. Курьеръ.)

ԲԱԴՈՒԻՅ։—Տեղիս նորակազմ Թատրոնական մասնաժողովի անդամ՝ բժիշկ Վարշամեանը յոգնած Թատրոնական ֆոնդի հաւաքից 500 բ., իւր հետևեալ ծանօթներից. Թովմաս Ամբրեան 100 բ., եղբայրք Նազարեաններ՝ Ալէքսանդր և Սամուէլ 100 բ., Յովհաննէս Միրզաբէգեան 100 բ., Աբգուլ Քէրիմ (Նազարեանների նաւագործարանի կառավարիչ) 50 բ., Բուզդան Թաւաքալեան 25 բ. և Մինաս Կաճկաճեան 25 բ։ Լսում ենք, որ բժիշկ Վարշամեանը մտադիր է անձամբ գնալ Նոր-Նախիջևան և մասնաժողովի կողմից հրաւիրել Բագու, յայտնի դերասան պ. Աղամեանին *)

«Заря» լրագիրը պատմում է հետևեալ եղեռնագործական դէպքը։ Այս օրերս Կիևի մենաստանում գտնուեցաւ 7—8 տարեկան մէկ աղջիկ, որին հարց ու փորձ անելուց երևաց, որ նրա աղգ անունը Վէրա Րիժովայեա է. նրա ծնողները մեռան, Թէ իրան և Թէ իւր եղբօր և փոքր քրոջը որդեգրեց իրենց մօրաքոյրը։ Այս օրերս բոլորը միասին գնացին Դնէպրի ափը զբօսնելու. մօրաքոյրը նրա եղբօր և քրոջը ձգից գետը, իսկ իրեն բերեց մենաստան։ Աղջիկը մանրամասնաբար պատմեց Թէ ինչպէս իւր եղբայրն ու քոյրը գետ ձգած ժամանակ գոռում էին և օգնութիւն խնդրում։ Ոստիկանութիւնը լսեստ մի խոցեր է ձեռք առել այդ հրեշաւոր մօրաքրոջը կալանաւորելու համար։

ՔՈՒԲԱՅԻՍԻՑ։—Այստեղ արդէն սաստիկ շոգեր են լինում. քաղաքի մաքրութեան վրայ մտածող չկայ։ Բնակիչները ամբողջ օրերով գատապարտուած են շոգի և անտանելի Թոզի մէջ անգկացնելու։ Տեզացիների միակ տեղը, որտեղ կարելի էր երեկոյեանները մաքուր օդ ծծել, Րիճնի ափին գտնուող «արքայական» կոչուած տունն է, որը շնորհիւ մեր իմաստուն քաղաքային վարչութեան, ժողովրդին անմատչելի է դարձել. այնտեղ այժմ կարելի է գնալ միայն տոմսակով, որտեղ շինուած է «էքե-բէսոչքա» երգեցիկ կանանց համբով։

Ամսոյս 8-ին, տեղիս վրաց սեմինարիայի օրինադպիրը՝ երիտասարդ պ. Մէհդիլովը առաւօտեան տանից Ծառայութիւն գնալիս՝ մէկ քահանայի և

*) Կարելի է նամակով էլ հրաւիրել, ծախքը պակաս կը լինի։ Խմբ.

վարդապետի ուղեկցութեամբ, հանից հանող անյայտ ձիաւոր մարդուց գընդակահար է լինում։ Միւս օրը կատարուեցաւ տեղացիներից յարգուած հանգուցեալի յուղարկաւորութիւնը։ Ոստիկանութիւնը միջոցներ է ձեռք առել յանցաւորին կալանաւորելու համար։

Ցունական լրագիրները հաղորդում են, որ Աթէնքի Ֆրանսիական հնագիտական ինստիտուտի յայտնի պրօֆեսսոր պ. Դիլը սրանից մի քանի օր առաջ արել է շատ նշանաւոր հնագիտական գիւտ, որ վերաբերվում է քրիստոնէութեան առաջին դարերին։ Նա գտաւ մի քար, որի վերայ գրուած են յունական և լատինական վիճնագիրները, որոնք վկայում են, որ այս քարը հենց այն քարն է, որի վերայ Յիսուս քրիստոսը Կանա-Գալիլեայում յայտնի հրաշքները արել և որը յետոյ բերուեցաւ նրա առաքեալների մէկի ձեռամբ Ցունաստան։ Թանգագին նշխարը կը տարուի Աթէնք։

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են որ նիկոլայ տարուայ օգոստոսի սկզբներում Կովկասի, Ղրիմի, Բեսարաբիայի և Դոնի գինեգործներին Թոյլ է տրուած իրենց հաշուով Պետերբուրգում խաղողի գինիների աշխարհահռչակ բանալ։

Ամսոյս 11-ին Թիֆլիսում տեղի ունեցաւ Թիֆլիսի նահանգական ազնուականութեան ներկայացուցչի ընտրութիւնը։ Ընտրուեցաւ Իշխ. Ի. Կ. Բագրատիոն-Մուխրանսկի։

„Петерб. Газета. լրագիրն ասելով, Պետերբուրգում բնակուող մէկ գիւղացի կին ամսոս 2-ին ծնել է միանգամից երեք երեխայ՝ մէկ տղայ և երկու աղջիկ, որոնք արդէն մկրտուել են և բոլորն էլ առողջ են։

Թիֆլիսի նահանգական դատարանը Ն. Յ. Մելիմանեանին սնանկ Ճանաչեց 500,000 բ. գումարի սպարտքով։

Այս օրերս Թիֆլիսի վրայով ուղևորուեցաւ դէպի Աւստրիա՝ Վիէննայի «Neues Viener Tagblatt» լրագրի աշխատակից և առանձին Թղթակից պ. Վախտէյլը։

Մայրաքաղաքի լրագիրների ստեղով, հեռագրական գլխաւոր վարչութեան մէջ հարց է բարձրացրած հեռագրական ծառայողների պաշտօնական հագուստի ձևը փոխելու։ Մտադրութիւն կայ պէտրուէլ թողարինել ամերիկական ձևի Լաֆոռնան ոսկերի վրայ հեռագրական սլաքները նշանագրած։

Տիգրանակերտէն հեռագիր մը հասած էր ի Պատրիարքարան ծանուցանող Թէ, 1,5000 Քաղդէացիք պատրաստ են հայկական եկեղեցւոյ պատանութիւնն ընդունելու, եթէ Տիգրանեան Միրտիչ եպիսկ. առաջնորդ կարգուի Տիգրանակերտի։ Աղգային Պատրիարքարանը սակայն կարեւորութիւն չէ տուած սոյն հեռագրին, վասն զի պաշտօնական հանգամանք չիրէն զատ, ստորագրող անձն, որ ազգութեամբ Քաղդէացի է, բոլորովին անծանօթ է պատրիարքարանի։

(Հայրենիք)

Մեզ գրում են. „Աբհիատաւորաց զբօսանքի վարչութիւնը, ի նկատի առնելով այդ ուսումնարանի Թոշակառու հայ աշակերտաց աղքատ և անճարանձելի դրութիւնը, անցեալ ամրան ուրոշեց արձակ և տօն օրերին իւրաքանչիւր աշակերտին օրական տասնեհինգական կոպէկ ճաշի փող տալ, որովհետև այդ օրերին ուսումնարանում ճաշ չէ տրուում։ Մինչև այսօր նրանք կանոնաւոր կերպով տանում էին այդ փողը, բայց այս վերջին օրերը, չգիտենք ինչ պատճառով, ուսումնարանի վարչութիւնը բարեգործական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԲԱԺԱԿ ՑՈՒՐՑ ՋՈՒՐ
(Ձմռարեայ անցք)

—

Ցունվարի մէկին էր։

Արեգակը փայլում էր կապոյտ երկնակամարի վերայ։ Նրա պայծառ ճառագայթների տակ մկլպիօնաւոր գոհարներով պսպղում էր նոր եկած ձիւնը։

Կէս օր աւետող Թնդանօթի ահարկու շառաչիւնը մի քառորդ ժամ առաջ միայն դղրդեցրել էր Թ. քաղաքը։

Փողոցներով սլանում էին անհամար կառքեր։ Պակաս չէին և ոտով անցուդարձ անողները, որոնք զուարթ դէմքով միմեանց նոր-տարի և նոր բադդ ցանկանալով շտապում էին դէպի զանազան կողմեր։

Վերջիններիս Թուլին պատկանում էի և ես։

Առաջնակարգ այցելութիւնները վերջացրած, ես վճռեցի փոքր ինչ աւելի օգուտ քաղել գեղեցիկ և Թարմ օդից, նպատակս իրագործելու համար ես փոխեցի իմ ճանապարհը դէպի քաղաքային այգին։

Հարկ չը կայ ասելու, որ այն օրը, տարուայ առաջին հանդիսաւոր տօն օրը՝ գրօսնողները շատ սակաւ էին. այն էլ գլխաւորապէս այնպիսի մարդիկ, որոնք այս կամ այն պատճառով զուրկ էին այցելութեան բաղդից։

Մի երկու շրջան անելուց յետոյ, ես հանդիպեցի լաղջալի տեսք ունեցող մի երիտասարդին, որը գլանակը ձեռքին մօտեցաւ ինձ և խնդրեց վառելու։

Նա մօտ երեսուն տարեկան ջահել տղամարդ էր, միջահասակ, սև և Թանձր մօրուքով. աչքերը սև սև ու մեծ մեծ, բայց չափից դուրս խոր ընկած...Ճակատը լայն, երեսի գոյնը դեղնած, իսկ Թշերի վերայ փայլում էր մի տեսակ անբնական կարմրութիւն։ Հագնուած էր օրքան կարելի է տաք. իսկ ոտների վերայ, չը նայելով ո՛չ-այնքան ցուրտ եղանակին, ձգած ունէր մի շատ հաստ ծածկոց, նրա ձայնը նուազ, Թէպէտ և խօսակցութիւնը բաւականին դուրեկան էր։ Երբեմն երբեմն դուրս էր Թռչում նրա կրծքի խորքերից մի չոր և ըստ երևոյթին շատ ցաւեցնող հազ։ Անհասկած՝ զարհուրելի բարակացաւը առել էր սրդէն Թշուառականի Թոքերից իւր կատարեալ բաւականութիւնը. մնում էր միայն մի բան, այն է որ բարերար մահը չուտով գար և ոզորմելի երիտասարդն տանջանքներին վերջ տար։

Այս ամենը այսպէս լինելով հանդերձ՝ անծանօթը ինձ վերայ Թողեց ո՛չ այնքան վատ և ծանր տպաւորութիւն։

Ես մօտեցրի նրան սիգարը և նա սկսեց ծխել։

Ջը գիտեմ ինչու, բայց ես ոտս կախ ձգելով կամենում էի մի քանի տեղեկութիւններ ձեռք բերել այս կենդանի կմախքի անցեալի մասին։ Կարծես նա ինքն էլ իւր կողմից կարդալով իմ աչքերի մէջ իմ դիտաւորութիւնը, հարցրեց ինձ ժպտալով։

—Երևում է, որ ես ձեզ հետաքրքրում եմ. այնպէս չէ՞։

—Այո՛, պատասխանեցի ես ցաւակցութեամբ։

—Եթէ այդպէս է, և եթէ ձեր ժամանակը ներում է, նստենք ահա այս նստարանի վերայ և ես կը պատմեմ ձեզ իմ կենսագրութիւնը և մի տասնչորսնամեայ անցք, որին զոհ գնաց իմ երբեմն նախանձելի առողջութիւնը։ Այո՛, բարեկամ, յարեց նա մէջքը գէմ գնելով նստարանի եռաթը կանգնած ծառին, ես ինքս էլ փափագում էի մեռնելուցս առաջ յայտնի անել իմ արկածքները, գուցէ նրանցից օգուտ կը քաղին ինձ նման չատ երիտասարդներից դոնէ մի քանիսը։

Այս յառաջաբանը ասելի գրգռեց իմ հետաքրքրութիւնը, և ես մոտալով նոր-տարին իւր բոլոր այցելութիւններով և զուարճութիւններով սկսեցի լսուած ուշադրութեամբ լսել հիւանդ երիտասարդի պատմութիւնը։

Նա սկսեց։

—„Ես ծնուած եմ Շ. գիւղում։ Իմ հայրը մի կալուածատէր մէլիք էր. չը գիտեմ ինչպիսի Ճանապարհներով նա ձեռք էր բերել ահագին հարստութիւն։ Հազարաւոր աննպատակ ծախքերի և քէֆերի համար խիստ չդալլ, իսկ իւր ընտանիքի ամենատնհրաժեշտ պիտոյքները հոգալու, մանաւանդ ինձ իւր միակ որդուն և ժառանգին փոքր ինչ մարդավայել կրթութիւն տալու համար չափազանց ժլատ, նա պատճառ դարձաւ որ ես վերջ ի վերջոյ Թողեցի գիմնազիոնի հինգերորդ դասատունը։ Այն ժամանակ ես քսան տարեկան էի։ Ինչպէս առհասարակ շատ Թերուս երիտասարդները, ես էլ սկսեցի անգործ, աննպատակ Թափառել։ Ինձ գրկարաց ընդունում էին, օր օրի վերայ աճող իմ բարեկամները, որոնց հրապուրում էր դէպի ինձ՝ իմ փողը, իմ անվի օրձութիւնը։

Այս միջոցներում հայրս մերձակայ Թուրք գիւղի հետ հողային մի վէճ ունէր, որի հետևանքը եղաւ նրա չարաչար սպանութիւնը։ Նրա գլխակի կտրատած մասերը միասին ժողովելով յանձնեցինք այն միևնոյն հողին, որի մասին սկսած վէճը ես ասելի քաւ համարեցի անուշագիր Թողնել։

Ուրեմն հայրս էլ չը կար. մնում էր միայն մայրս, մի շատ բարի և շատ որդեսէր կին։ Ինձ համար թացուեցաւ աշխարհի մէջ ազատ կենցաղավարութեան մի ընդարձակ ասպարէզ։ Բազմաթիւ բարեկամներից ես ընտրեցի միայն երեքին։ Իմ ընտրութիւնս շատ անյաջող էր։

Անբարոյականութեան մաղի բոլոր ծակերովն անցած՝ նրանք կատարեալ ափերովն ափրեցին և ինձ վերայ։ Ես անփորձ էի և մօրս խրատներին, աղաչանքներին խուլ։

(Հայերեն)

Հարգելի տիկին Ս. Ի. ի իր ասած խոսքի համար շնորհակալ եմ, բայց ես ոչ մի բանում չեմ համաձայնում նրա հետ։ Ես կարծում եմ, որ մեր ազգի ամենամեծ թշնամին մեր ներքին անհամերաշխությունն է։ Ես ուզում եմ, որ մեր ազգի զավակները միանան, որ մենք ունենանք մեր ազգային թատրոնը, մեր ազգային գրականությունը, մեր ազգային երգերը, մեր ազգային պարերը, մեր ազգային տոները, մեր ազգային սովորությունները, մեր ազգային հագուստը, մեր ազգային ուտելիքները, մեր ազգային խմիչքները, մեր ազգային ծիսակատարությունները, մեր ազգային հանդերձանքը, մեր ազգային ամուսնությունները, մեր ազգային հարսանիքները, մեր ազգային թաղումները, մեր ազգային ուրախությունները, մեր ազգային տխրությունները, մեր ազգային ծիծաղը, մեր ազգային լացը, մեր ազգային ժպիտը, մեր ազգային հայացքը, մեր ազգային հոգին, մեր ազգային մարմինը, մեր ազգային ամբողջությունը։ Ես ուզում եմ, որ մենք ունենանք մեր ազգային ինքնությունը, մեր ազգային գոյությունը, մեր ազգային էությունը, մեր ազգային գոյությունը, մեր ազգային էությունը, մեր ազգային գոյությունը, մեր ազգային է

ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ինչպես հաղորդում են Ֆրանսիայի կառավարական շրջանակները, Ֆրանսիայի նախագահ Ժյուլ Գրեվին ընդունել է Նոր Հայկական Հանրապետութեան նախագահ Ալեքսանդր Խատիսեանի հեռագիրը, որով վերջինս տեղեկացնում է Ֆրանսիայի նախագահին Նոր Հայկական Հանրապետութեան հռչակման մասին:

Ֆրանսիայի նախագահ Ժյուլ Գրեվին ուղարկել է շնորհաւորական հեռագիր Նոր Հայկական Հանրապետութեան նախագահ Ալեքսանդր Խատիսեանին:

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարութիւնը ընդունել է Նոր Հայկական Հանրապետութեան դեսպան Ալեքսանդր Խատիսեանի հաւատարմագրերը

Կորդոֆանից դէպի հիւսիս, այն ինչ Հակա-Մահդին բանակուած է հարաւ Էլ-Օբէյդում։

—

Թեհրանից „Temps“-ին ծանուցանում են, որ Աղանստանի անկախութեան համար յատնի կառուց Էյուբ-խանը, ամեն տեսակ ինարիգաններ է լարում, որպէս զի ինքն ազատուի։ Անգլիան պահանջում է, որ նրա վերայ հայեցողութիւնը զօրեղացնուի և յայտարարել է պարսկական կառավարութեանը, որ նա պատասխանատու կ՚լինի այն դէպքում, երբ Էյուբ-խանը փախչել կ՚յաջողացնի։—«Daily News»-ին հեռագրում են, որ Բուխարայի խանը տքնում է Էյուբ-խանի ազատութեան համար, ինչպէս պարսկական, նմանապէս էլ ռուսական կառավարութիւններին խնդիրք է ներկայացուած այդ մասին։ Աղանական էմիրը իւր կողմից խնդիրքով դիմեց անգլիական կառավարութեանը, որպէս զի նա օգուտ քաղէր իւր՝ Թեհրանում ունեցած ազդեցութիւնից և աչխատէր, որ Էյուբը վոհսագրուէր հնդկական կամ պարսկական մի որևէ քաղաք, ուր տեղից նա չ՚կարողանար Հերատում խռովութիւններ յարուցանել։

—

Բերլինից ապրիլի 30-ից հեռագրում են, որ անգլիական սահմանագիծը յանձնաժողովի քարտուղար Ստեֆինը Աղանիստանից Ռուսիայի վրայով ժամանեց Բերլին, ու իսկոյն ուղևորուեցաւ դէպի Անգլիա։

—

Թեհրանից մայիսի 1-ից գրում են, որ գեներալ Լեմսդէնը Մեշհեդ հասաւ։ Նա կը ժամանի Անգլիա միայն յունիսի սկզբում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թուրքմանները և խոլերան։—Հաստատում են, որ 1884 թուականին Մարտից սկսում խոլերայի երևալուց յետոյ, այնտեղ անյայտացան 3իմեռանիները, որոնք և այս տարի չեն վերադարձել։ Միևնոյն են ասում և Ծիտերի մասին։ Միևնոյն երևոյթ են նկատել և Կայրօում և միւս եգիպտական քաղաքներում։

***

Լէյպցիգում շուտով կը հրատարակուի մի շատ ինքնատեսակ լրագիր «Algemeine Zeitschriften Zeitung» անունով (Լրագիրների լրագիր), որի նպատակը կը լինի տեղեկութիւններ հաղորդել երկրագնդիս վերայ գոյութիւն ունեցող բոլոր մամուլի մասին։

***

Ամերիկացիները ուզում են ձեռնարկել մի շատ համարձակ մտքի իրագործմանը, այն է լուսաւորել Ատլանտեան օվկիանոսը Նիւ-Ֆաունդլենդի ափերից սկսած մինչև Իրլանդիայի ափերը. այս նպատակով ամեն 200 մղոն հեռաւորութեան վերայ կը դասաւորուին խարխոխ ձգած նաւեր, միացած մեմեանց հետ էլեքտրական լարով։ Նրանք բացի գրանից հեռագրական գծի տեղ կը ծառայեն։ Ուրքան էլ սա երևակայական մի դիտաւորութիւն է երևում, բայց այնուամենայնիւ անգլիացիները յոյս ունին այսօր կամ վաղը իրագործել այդ միտքը։

***

Մի ինժիները Բերլի անունով նախագիծ է կազմել Փարիզի և Լօնդօնի մէջ օդային պօստային հաղորդակցութիւն հաստատելու։ Այս նախագծին համաձայն, երկու խողովակ պիտի գրուին, որոնցից իւրաքանչիւրը միայն մէկ ուղղութեամբ ուղարկելու համար կը լինի։ Կուղարկուին հեռագիրները, նամակները և դանազան իրեր, որոնք 5 կիլոգրամմից աւելի չեն կշռում։ Օդային պօստի շինութիւնը կարժենայ 40,000,000 ֆրանկ։ Իւրաք ճանապարհի վերայ (500 կիլոմետր) կը գտնուին միայն մի քանի կայարան։ Լօնգօնից Պարիզ նամակ կամ մի ուրիշ թեթև բան ուղարկելը կը տևի մի ժամ։ Բեռւի ինժիները նախագիծ է կազմում նոյնատեսակ պօստային հաղորդակցութիւն հաստատելու Փարիզի, Լիօնի և Միջերկրական ծովի մէջ, այնպէս որ Փարիզից ուղարկուած թղթակցութիւնները Մարսէլում կարելի է մի ժամից յետոյ ստանալ։

***

Թանգագին Թանաքամանները։—Քարուլից պարսկական լրագրերին հաղորդում են, որ Էմիր Աբդուրահմանը մի քանի օր յետոյ այն ժամանակից, երբ յոյս ունէին անյօդուսական պատերազմի տեղի ունենալ իւր մայրաքաղաքի օսկերիչներին պատուիրեց 15 Թանաքաման շինել իւր գեներալների համար 21,000 ռուբլի (1 ռուբլին 65 կոպ.) արժողութեամբ։ Աւազանցիները մի հին սովորութիւն ունին, որ էմիրը իւր գեներալներին պատերազմ ուղարկելիս, խրաքանչիւրին մի սուր և մի Թանաքաման է տալիս, Թանաքամանները կրում են զօրիների վերայ այն պատճառաւ, որ նրան պեկուցումն գրեն։ Այդ Թանաքամանները զարդարուած են ոսկում և զարդարուած Թանգագին քարերով։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
„ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

10 Մայիսի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Սիբիրիայի համալսարանը կը բացուի 1886 թ. օգոստոսի 26-ին իւր բոլոր չորս ճիւղերովը, իսկ արևմտեան-սիբիրեան հոգաբարձութիւնը ներկայ տարուայ յունիսի 1-ին։ Նշանակուելու է հոգաբարձու Գազանի համալսարանի պրօֆեսսոր Ֆլորինսկին։

Գիտնական ոյժերին դէպի համալսարան գրաւելու համար տրուելու են պրօֆեսսորներին նշանաւոր արտօնութիւններ։ Ասում են, որ այս հարցը շուտով քննուելու է պետական խորհրդում։

Այսօր առաւօտեան, խիստ քամու ժամանակ, Հրդեհուեցան Մարսովեան դաշտի վերայ բալագանները. այրուեցաւ մէկ մեծ և մի քանի էլ փոքր բալագաններ. ատիպուեցան մի քանի բալագանները քանդոտելու։ Հրդեհի պատճառը անյայտ է։ Վնասազրութիւններ չեղան

Լօնդօն. Մարքիզ Գարտինգտոնը յայտարարեց, որ ցանկալի չէ բացատրութիւն տալ պալատին թէ ինչու համար է մնում թիկնապահ զօրագունդը Ալէքսանդրիայի մօտ։ Հնդկաստանի գործոց քարտուղարը յայտարարեց, որ ցանկալի չէ հրատարակել լորդ Դիւֆֆերինի էմիրի հետ ունեցած խորհրդակցութեան վերաբերեալ թղթերը, մինչև որ չեն վերջանալ բանակցութիւնները Ռուսիայի հետ։ Գլադստոնը յայտնեց, որ կարծիքների փոխանակութիւնը Սուակիմի գրաւման մասին, անգլիացիների այնտեղից դուրս գալուց յետոյ, տեղի է ունեցել միայն Թիւրքիայի հետ։ Լորդ Կիմբերլէյ մերժեց այն լուրը, որպէս թէ Ռուսիան պահանջում է թոյլ տալ ունենալու իրեն դիւլոմատիական ներկայացուցիչը Կաբուլում և ասաց, որ սահմանագիծը այն տեսակը պիտի լինի, որ լաւ պաշտպանողական դիրք տայ, որի շնորհիւ կարելի լինէր շարժումն գործել, հենց որ այդ կը պահանջէին Անգլիայի և Հնդկաստանի շահերը։

ՓԱՐԻԶ. Աչքի առաջ ունենալով կիւրակի օրը պատրաստուելիք անկարգութիւնների տեղի ունենալը կոմմունալի ապստամբման ճնշման տարեդարձի առիթով, առանձին հրահանգներ կը տրուին ոստիկանութեանը։ Անպատման կարգելուի կարմիր և սեւ դրօշների քարձրացնելը։

11 Մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Երկաթուղիների վարչութիւնը մի շրջաբերականով արգելում է ազատ խաղը երկաթուղիների վերայ։ Որոշուեցաւ զօրքերի համար դրամական գումարներ նշանակել այն գիպուածում, երբ խօլերան երևայ, որպէս զի կարելի լինի հակավարակիչ միջոցներ ձեռք բերել։

ՄՕՍԿՈՒԱ. Ներքին գործոց մինիստրը այսօր Մոսկուայից ուղեւորուեց իւր կալուածքները, որոնք Բեաշան նահանգումն են գտնվում։

ԼՕՆԴՕՆ. Պատգամաւորների ժողովում առաջարկեց երկրորդ անգամ կարդալ արևելեան Հնդկաստանի 10 միլ. ֆունտ ստերլինգի փոխառութեան հարցի մասին, որ պէտք նոր երկաթուղիների շինութեան համար և յայտնեց, որ 5 միլ. անհրաժեշտ են պատերազմական ճանապարհների համար, որ կարելի լինի աւելի լաւ հաղորդակցութիւն հաստատել Կվիտայի հետ. մէկ երկաթուղեայ գիծ պէտք շինել Ինդոս գետից դէպի արևմուտք, իսկ միւսը դէպի արեւելք և, բացի սրանից, պէտք Ինդոս գետի վերայով անցնելու ճանապարհ շինել, իսկ յետոյ, մատդրութիւն կայ, կամուրջ շինել Ֆերոզպորի մօտ և պատերազմական ճանապարհ դէպի Պիշինի լեռնաշղթերը և մի երկաթուղեայ գիծ էլ Բալանի անցքովը։ 9 ժամ տեւող վիճաբանութիւններից յետոյ առաջարկութիւնը ընդունուեցաւ նրա երկրորդ ընթերցմամբ։

ՓԱՐԻԶ. Երեկ Վիկտոր Հիւգոն վախճանուեց։ Մինիստրութիւնը առաջարկութիւն կանի տերութեան հաշուով կատարել նրա թաղումն։

Պատգամաւորների ժողովի նախագահը առաջարկեց բանաստեղծի մարմինը դնել յաղթական կամարակապ դռների տակ։

Քաղաքային վարչութիւնը ցանկութիւն յայտնեց թաղել նրան Պանտէոնում։

ԼՕՆԴՕՆ. Պատգամաւորների ժողովի նիստերը յետաձգուած են մինչև յունիսի 4-ը։

ՍԻՄԼԱ. Եկան Հերատ անգլիական սպաները այցելութեան և այնտեղի ամրութիւնները կարգի բերելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

Երէկ ամսական պրոմաթէէզը։

10 Մայիսի.

Լօնդօն $24^{1}/_{16}$ $24^{7}/_{32}$ և $24^{3}/_{32}$
Համբուրգ $205^{1}/_{4}$ և $206^{1}/_{4}$
Փարիզ $254^{1}/_{2}$ և $255^{1}/_{2}$ „ —
Պօլուիմպերիալ 8 ր. 18 կ. սակ.
Մաքս. կորոններ
(կուպոն) . 8 „ 15 „ սակ.
Յրծաթ . . . 1 „ 30 „ „
Բօրսային դիս. 6 և 7% „
Պետակ. քանկէ 5% տոմսեր.
1-ին շրջանի 98 ր. 62 կ. սակ.
2-րդ „ . 97 ր. 62 կ. „
3-րդ „ . . $97^{1}/_{4}$ „ „
4-րդ „ . . $97^{1}/_{4}$ ր. գն.
5-րդ „ . . $97^{1}/_{4}$ ր. „
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր.
1-ին շրջանի. 94 ր. 62 կ. վաճ.
2-րդ „ . $94^{1}/_{4}$ ր. սակ.
3-րդ „ . . $94^{1}/_{4}$ սակ.
Տար. գրամ. 1-ին փոխ. 5%
տոմսեր . . . 220 ր. „ „
„ „ 2-րդ $207^{3}/_{4}$ ր. „ „
$5^{1}/_{2}$% բենտեր . $101^{3}/_{4}$ սակ.
Ոսկէ բենտը . . $168^{3}/_{4}$ „ „
Նոր կոնսոլ փոխ. $143^{1}/_{4}$ ր. գն.

12 Մայիսի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Տեղական վարչութեան նախագծեր պատրաստող յանձնաժողովի պարապմունքների վերջանալու առիթով, նրա նախագահ պ. Կախանովին Խարձրագոյն շնորհակալութիւն է յայտնուած, այլև բոլոր ընդհանուր հարցերի մշակութեան մէջ մասնակցող անդամներին, այն է տեղական, դասական և հասարակական ներկայացուցիչներին, որոնք այս նպատակով հրաւիրուած էին։

Գլխաւոր ծովային շտաբը յայտարարում է, որ Նիվեդացից թագաւորի հրամանով մայիսի սկզբից Ֆարեզոնդի հիւսիսային և հարաւային անցքերը փակուած են լողորդութեան համար ականներով, ուստի նաւերին անպատման արգելուած է Ֆարիզոնդի նեղուցով անցնելը. իսկ հարաւային մասով անցնելու համար հարկաւոր է դիմել նաւաստիներին։

ՓԱՐԻԶ. Սենատը ընդունեց այն օրինագիծը, որ վերաբերւում է ընտրութիւնների նոր եղանակի գործադրութեան, այն է համեմատ նահանգական ցուցակներին միայն մի պայմանով, որ Ֆրանսիայում թագաւորող տոհմերի անդամներից ոչ մէկը կարող չէ ընտրուել։

ԲԱԳՈՒ. Այսօր Աւղանիայից եկաւ գեներալ Լեմսդէնը և ուղևորուեց Թիֆլիս։

ՀՈՒՎՄ. Առողջապահական խորհրդի տեխնիքական յանձնաժողովը վճռեց առաջարկութիւն անել խորհրդին վերացնել կարատինները և առողջապահական կորդոնները։

Թղթագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անդրկովկասեան երկաթուղին։
ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԿՈՒԹԻՒՆԸ „ԹԻՖԼԻՍ“ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ։

Բաժում պատա. գնում է ժ. 8—35 րոպ. առ.
Բաժումից „ գալիս է „ 10—25 „ գիշ.
Բագու . . . գնում է „ 10—55 „ գիշ.
Բագուից „ „ գալիս է „ 8 —„ „ ցեր.

ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՍՈՒԲՈՒՄԻ ՄԻՋԻ.

Թիֆլիսից ապր.—Ճանապ. գնաց. գնում է . . . . . ժ. 3—15 „ առ.
Սուբումից . . գալիս է „ 8—24 „ առ.

Վլադիկաւկազեան պօստային ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԿՈՒԹԻՒՆԸ «ԹԻՖԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ.

Կառքերը, որոնք Ճանապարհին զնչերկրլա կայարաններ ունեն։

Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին։ Վլադիկաւկաս գալիս են երեկոյեան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ.—43 րոպ. միջ.
Վլադիկաւկասից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ. և ժ. 5—25 րոպ.

ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՆՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ։

Նոյեմբերի 1-ից կազմուածցուցակը շոգենաւերի երեւելութեան համար մի շաբաթուայ ընթացքում Բաթումի, Օչասայի և Պօթի միջ։

ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ Է։

ՀԻՆԳՇԱՔԹիօրերը, ժամի 4-ին երեկոյեան, ուղիղ գծով Նովոռօսիյսկ և Կերչ քաղաքները վերայ։

ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ, ժամի 8-ին երեկոյեան շրջանական գծով ամեն նաւահանգիստները վերայ։

ԿԻՒՐԱԿԻ օրերը, արտաքսմանեան գծով գեպի Պօթի։

ԴԱԼԻՍ Է ԲԱԹՈՒՄ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ, կէս գիշերին մօտ, Օչասայից շրջանական գծով։

ՈՒՐԲԱԹ օրերը առաւօտեան, Օչասայից ուղիղ գծով Կերչ և Նովոռոսիյսկ քաղաքները վերայ։

ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ, առաւօտեան, Պօթիից։

Մոսկուա, Պետերբուրգ և արտասահման գնալու պատճառով, Մ. ՅԵՅՏԼԻՆԻ մագազինում, որը գտնվում է պալատի Հանդէպ, կը վաճառուին մայիսի 12-ից մինչև յունիսի 1-ը

ՊԱԿԱՍԱՑՐԱԾ ԳՆԵՐՈՎ

Ամեն տեսակ բազմաթիւ ոսկէ, արծաթէ ժամացոյցներ, որոնց ես ինքս անձամբ պատուիրել եմ Ժենեվայի ամենալաւ գործարաններում, պատի և սեղանի Ֆրանսիական և գերմանական ժամացոյցներ, ամերիկական զարթեցնող ժամացոյցներ, շվեյցարական խաղի արկղիկներ։ Նուրբ և գեղեցիկ շինուած ոսկէ, արծաթէ և ադամանդեայ իրեղէններ։ Ոսկէ, պլատինէ, արծաթէ և ոսկէջրած արծաթէ և մետալիքական շղթաներ։

Այս իրերի լաւ յատկութեան և ժամանութեան մէջ կարող է համոզուած լինել հասարակութիւնը։

Մագազինը երաշխաւոր է ժամացոյցների կանոնաւոր և ճիշդ գալու մասին մինչև հինգ տարի։

3—2

Дозволено цензурою. Тифлисъ, 13-го Мая 1885 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д., № 12